ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՀՍՍՀ-ՈՒՄ ԶԱՐԳԱՑԱԾ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

ՌՈՒԲԵՆ ԱԶԻԶԲԵԿՅԱՆ

Զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում բանվոր դասակարգի բնորոշ գծերից մեկը նրա մասնագիտական բարձր պատրաստվածությունն է։ Այս գործում մեծ դեր ունի պրոֆտեխուսուցման համակարգը։ Քննվող ժամանակաշրջանում վերջինս Հայաստանում զգալիորեն կատարելագործվեց։ Այսպես, եթե 1961 թ. հանրապետությունում գործում էր 12 այդպիսի ուսումնական հաստատություն, ապա 1981 թ.՝ 100[1]։ Պրոֆտեխուսուցման համակարգի ընդլայնումը հանգեցրեց սովորողների ընդունելության թվաքանակի կտրուկ աճի. եթե 1965 թ. նշված հաստատություններն ընդունվեցին 8,8 հազար մարդ, ապա 1981 թ.՝ 36,3 հազ.[2]։ Սա վկայում է, որ զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում պրոֆտեխուսուցման համակարգում բանվորական կադրերի պատրաստման մասշտաբները գնալով մեծանում են։ Միայն 10-րդ հնգամյակի տարիներին հանրապետության պրոֆտեխուսումնարանները ժողովրդական տնտեսության համար պատրաստել են ավելի քան 140 հազ. որակյալ բանվոր, դրեթե նույնքան, որքան պատրաստվել է պրոֆտեխկրթության համակարգի գոյության նախորդ 30 տարվա ընթացքում[3]։ Հատկանշական է, որ ՀՍՍՀ-ում նշված համակարգում բանվորական կադրերի պատրաստման աճի տեմպերը զգալիորեն գերազանցում են համամիութենականը։ Այսպես, եթե ՍՍՀՄ-ում 1960 թ. համեմատությամբ 1981 թ. պրոֆտեխուսուցման համակարգում պատրաստվել են 3 անգամ ավելի որակյալ բանվորական կադրեր, ապա ՀՍՍՀ-ում՝ 14 անգամ ավելի[4]։ Հանրապետության պրոֆտեխուսուցման համակարգում բանվորների պատրաստման նման բարձր տեմպերը պայմանավորված են ՍՍՀՄ բանվոր դասակարգի ազգային ջոկատների կազմում բարձրորակ բանվորական կադրերի պատրաստման ուղղությամբ ՍՄԿԿ և սովետական կառավարության հետևողական հոգատարությամբ և ժողովրդական տնտեսության մեջ նրանց նկատմամբ պահանջարկի անշեղ աճով։ Ինչպես նշեց ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Յու. Վ. Անդրոպովը ՍՍՀՄ կազմավորման վաթսունամյակին նվիրված իր զեկուցման մեջ, «կուսակցությունը միշտ հսկայական ուշադրություն է նվիրել մեր հասարակության առաջատար ուժը կազմող սովետական բանվոր դասակարգի ազգային ջոկատների աճին։ Եվ արդյունքները տոկա են։ Այժմ բանվորները ամենախոշոր սոցիալական խումբն են բոլոր միութենական

---

1 «Народное хозяйство Армянской ССР в 1975 году», Статистический ежегодник, Ереван, 1976, с. 184; «Народное хозяйство Армянской ССР», Юбилейный статистический сборник к 60-летию образования СССР, Ереван, 1982, с. 183.

2 «Народное хозяйство Армянской ССР», Юбилейный статистический сборник к 60-летию образования СССР, с. 184.

3 *Կ. Ս. Դեմիրճյան, ՀԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը Հայաստանի կոմունիստական կուսակցության XXVII համագումարին, Երևան, 1981, էջ 76։*

4 *Հաշվարկը կատարված է՝* «Народное хозяйство СССР в 1980 г.» Статистический ежегодник, М., 1981, с. 375, «Народное хозяйство Армянской ССР», Юбилейный статистический сборник к 60-летию образования СССР, с. 185 *ժողովածուների տվյալների հիման վրա։*

հանրապետություններում։ Սակայն դրանցից մի քանիսում բանվոր դասակարգի կազմում պետք է ավելի լրիվ ներկայացվի արմատական ազգությունը։ Այսպեսզի էլ ՍՄԿԿ XXVI համագումարի առաջադրած խնդիրը՝ ընդլայնել ու բարելավել հանրապետություններում բնակվող բոլոր ազգերից ու ազգություններից որակյալ բանվորների պատրաստումը։ Դա հարկավոր է էկոնոմիկայի զարգացման համար։ Դա կարևոր է նաև քաղաքականապես»[5]։

Ինչպես հայտնի է, 1950-ական թվականների կեսերից ՀՍՍՀ ժողովրդական տնտեսությունը լայնորեն վերակառուցվեց, որը և հանգեցրեց մեքենաշինության, էլեկտրոնիկայի, ռադիոտեխնիկայի, քիմիայի և արդյունաբերության այլ ճյուղերի ինտենսիվ զարգացմանը։ Վերջիններիս աճի տեմպերը համապատասխանաբար պահանջում էին բանվորական բարձրորակ կադրեր։ Սակայն 1960-ական թվականների կեսերին հանրապետությունում նկատվում էր բանվորական կադրերի և արտադրության զարգացման մակարդակների որոշակի անհամամասնություն։ Դրանից ելնելով, հանրապետությունում ընդլայնվեց պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնական հաստատությունների ցանցը և դրանցում բարելավվեցին ուսումնադաստիարակչական աշխատանքները։ Հայաստանի պրոֆտեխուսուցման համակարգի նյութատեխնիկական բազան ընդլայնվեց ու ամրապնդվեց։ Եթե 1960-ական թվականների սկզբին հանրապետության ուսումնարաններում գործում էր 115 ուսումնական արհեստանոց և 135 կաբինետ ու լաբորատորիա, ապա 1980-ական թվականների սկզբին դրանց թիվը համապատասխանաբար հասավ 470-ի և 1060-ի։ Պրոֆտեխուսուցման համակարգի հետագա զարգացման համար կարևորագույն նախադրյալ հանդիսացավ հանրակրթական դպրոցի ուսուցման կատարելագործումը (սկսած 1960-ական թվականների կեսերից)։ Վերջինիս հետևանքով ոչ միայն կազմվեցին դպրոցական նոր ծրագրեր ու դասագրքեր, այլև գիտական նոր հիմքերի վրա դրվեցին բարձրորակ բանվորական կադրերի պատրաստման մեթոդները, որոնց բովանդակությունը համապատասխանում էր գիտատեխնիկական հեղափոխության պահանջներին։ Այս խնդրում մեծ դեր էր հատկացվում միջնակարգ պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնական հաստատություններին, որոնց ցանցն ընդլայնվեց։ Այսպես, 1981 թ. Հայաստանում արդեն գործում էր 55 միջնակարգ պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնարան[7]։ Միաժամանակ զգալիորեն բարելավվեցին տեխնիկական ուսումնարանների աշխատանքները, որոնցում բանվորական մասնագիտություններ էին ստանում հիմնականում միջնակարգ դպրոցների շրջանավարտները։ Վերը նշված փոփոխությունների հետևանքով, հանրապետության պրոֆտեխուսուցման համակարգում սովորողների կազմում զգալիորեն նվազեց ութերորդ դասարանից ցածր կրթական մակարդակ ունեցողների բաժինը և աճեց ութամյա և միջնակարգ կրթություն ունեցողներինը[8]։ Վերջինս նպաստեց ուսումնարաններում բանվորական կադրերի պատրաստման մակարդակի բարձրացմանը։ Այդուհանդերձ, կրթական բարձր մակարդակ ունեցող երիտասարդներին պրոֆտեխուսուցման մեջ ընդգրկելու գործում դեռևս գոյություն ունեին լուրջ դժվարություններ։ Թվում է, թե համաձայն կանոնադրության պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնարանները պետք է ընդունվեին 15 տարեկանից ոչ ցածր ութամյա կրթությամբ երիտասարդներ։ Սակայն ընդունելության պլանների կատարման դժվարությունների հետևանքով հանրապե-

---

5 Յու. Վ. Անդրոպով, ՍՍՀՄ վաթսուն տարին։ Զեկուցում ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Գերագույն սովետի և ՌՍՖՍՀ Գերագույն սովետի համատեղ հանդիսավոր նիստում, Երևան, 1983, էջ 14։

6 Ա. Ե. Վարդանյան, Որակյալ աշխատուժի ընդլայնված վերարտադրությունը (Հայկական ՍՍՀ արդյունաբերության օրինակով), Երևան, 1971, էջ 116, «Ավանգարդ», 31. VII. 1981։

7 «Народное хозяйство Армянской ССР», Юбилейный статистический сборник к 60-летию образования СССР, с. 183.

8 Վ. Ա. Կուրեղյան, Հայկական ՍՍՀ աշխատանքային ռեսուրսների օգտագործումը արդի փուլում, Երևան, 1978, էջ 136։

տության ուսումնարաններն ընդունում էին նաև 15 տարեկանից ցածր, անգամ ութամյա կրթություն չունեցող պատանիների և աղջիկների։ Բավական է նշել, որ եթե 1970-ական թվականների վերջերին Միության մեջ ութամյա կրթություն ունեցողների 20%-ն էր սովորում պրոֆտեխուսուցման համակարգում, իսկ մերձբալթյան հանրապետություններում՝ 25—30%-ը, ապա Միջին Ասիայում և Անդրկովկասում, այդ թվում և Հայաստանում, 10—15%-ից ոչ ավելին[9]։ Մեր կարծիքով միջնակարգ, այդ թվում և պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնական հաստատությունների ընդունելության պլանների կազմումը պահանջում է սովորողների ենթադրվող թվաքանակի ճշգրիտ հաշվարկում, ինչպես նաև կոնկրետ սոցիոլոգիական հետազոտությունների իրականացում, որոնք հնարավորություն կտան բացահայտելու երիտասարդության նախասիրությունները հանրակրթական և կոնկրետ պրոֆեսիոնալ կրթության նկատմամբ։ Միաժամանակ պետք է հաշվի առնվեն տեգիոնալ յուրահատկությունները։ Դա հնարավորություն կտա ստեղծանաբար հաղթահարելու նշված դժվարությունները և միջնակարգ ուսումնական հաստատություններում երիտասարդության մասնագիտացումը դարձնել առավել նպատակասլաց։

Քննվող ժամանակաշրջանում հանրապետության պրոֆտեխուսուցման համակարգի ուսումնարաններն ընդունվողների կազմում որոշակիորեն նվազել է միջնակարգ կրթություն ունեցողների բաժինը։ Դա բացատրվում է նրանով, որ Հայաստանում միջնակարգ կրթություն ունեցող երիտասարդների դգալի մասը (հատկապես քաղաքներում) գերադասում է ուսումը շարունակել բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում, իսկ այն պատանիները ու աղջիկները, որոնք միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո չէին կարողանում նշված հաստատություններն ընդունվել, նախընտրում էին մասնագիտություն ձեռք բերել անմիջապես արտադրության մեջ։ Վերջինս, մեր կարծիքով, ունի իր սուբյեկտիվ և օբյեկտիվ պատճառները. անմիջապես արտադրության մեջ բանվորների պատրաստման ժամկետները մի քանի անգամ կարճատև են, քան պրոֆտեխուսուցման համակարգում սովորելու ժամկետները, արտադրությունում ուսումնական ծրագրերն առավել պարզեցված են, իսկ այս մեթոդով պատրաստված բանվորների աշխատավարձը համեմատաբար բարձր է, և ուսուցումը ավարտելուց հետո նրանց տրվում է ավելի բարձր որակավորում։ Առավել կարևորագույն պատճառներից են պրոֆտեխուսումնարանների թույլ կապը հանրակրթական դպրոցների հետ և հատկապես սովորողների մեջ տարվող մասնագիտական կողմնորոշման աշխատանքների վատ կազմակերպումը։ Այդ է վկայում այն փաստը, որ հանրակրթական դպրոցների շրջանավարտների մի մասը պրոֆտեխուսումնարաններն հիմնականում դիտում են որպես բարձրագույն ուսումնական հաստատություններն ընդունվելու համար առավելություններ ձեռք բերելու միջոց։

Պրոֆտեխուսուցման համակարգը մեծ նշանակություն ունի գյուղի երիտասարդությանը բանվոր դասակարգի մեջ ընդգրկելու գործում։ 1960-ական թվականների կեսերին նշված համակարգի ուսումնարանների սովորողների կազմում գյուղական երիտասարդության բաժինը կազմում էր 50, իսկ 1970-ական թվականների կեսերին՝ 60%[10]։ Ինչպես տեսնում ենք, նշված ժամանակահատվածում պրոֆտեխուսուցման համակարգում գյուղական երիտասարդության տեսակարար կշիռը մեծացել էր 10%-ով։ Դա մասնավորապես բացատրվում է գյուղական պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնարանների ցանցի ընդլայնմամբ, որոնցում գյուղի բնակիչները կազմում էին բացարձակ մեծամասնություն։ Եթե 1971 թ. ՀՍՍՀ-ում գործում էր միայն 2 գյուղական ուսումնարան, ապա 1981 թ. արդեն 14, իսկ դրանցում սովորողների թվաքանակը համապատասխանաբար 1,4 հազարից աճեց մինչև 10,2 հազարի[11]։ Հանրապետության

---

9 «Известия», 4. VIII. 1979

10 Վ. Ա. Կուրեղյան, նշվ. աշխ., էջ 136։

11 «Սովետական Հայաստան», 14 I. 1976, «Народное хозяйство Армянской ССР», Юбилейный статистический сборник к 60-летию образования СССР, с. 183.

գյուղական ուսումնարանների ցանցի ընդլայնումը պայմանավորված էր ոչ այնքան գյուղատնտեսության պահանջների աճով, քանի որ կոլտնտեսություններում գոյություն ունի աշխատանքային ռեսուրսների դգալի ավելցուկ, որքան մի շարք ուրիշ պատճառներով։ Հայտնի է, որ գյուղական ուսումնարանների շրջանավարտների մեծ մասը համալրում է ժողովրդական տնտեսության «բաղաքային» և ոչ թե «գյուղական» ճյուղերը, առաջին հերթին՝ արդյունաբերությունը և շինարարությունը։ Այսպես, 1975—1981 թթ. պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնական հաստատություններում, ինչպես նաև անմիջականորեն կոլտնտեսություններում և սովխոզներում պատրաստվել են ավելի քան 43 հազար տրակտորիստ-մեքենավարներ, տրակտորիստներ, կոմբայնավարներ, ավտովարորդներ, կոմբայնավար-մեխանիկներ (այդ թվում կեսից ավելին պրոֆտեխուսուցման համակարգում), այն դեպքում, երբ 1981 թ. ապրիլի 1-ի տվյալներով հանրապետության գյուղատնտեսության մեջ զբաղված էին ընդամենը 21 հազար տրակտորիստ-մեքենավարներ, տրակտորիստներ, կոմբայնավարներ և վարորդներ[12]։ Հետևաբար, գյուղական պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնարանների շրջանավարտների որոշակի մասը կամ անմիջապես, կամ մի որոշ ժամանակից հետո տեղափոխվում է գյուղից քաղաք կամ էլ աշխատանքի է ընդունվում գյուղական վայրերում տեղադրված ոչ գյուղատնտեսական ձեռնարկություններում։ Ելնելով դրանից, փոքր քաղաքներում և հատկապես գյուղական վայրերում, պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնարանների ցանցի ընդլայնումը մի կողմից նպաստում է հանրապետության տարբեր շրջաններում գործող արդյունաբերական ձեռնարկությունները բանվորական բարձրորակ կադրերով համալրելուն, իսկ մյուս կողմից՝ կրճատում է գյուղական երիտասարդության հոսքը դեպի խոշոր քաղաքներ։

Քննվող ժամանակաշրջանում պրոֆտեխուսուցման համակարգը մեծ դեր էր խաղում նաև արտադրության մեջ ընդգրկված բանվորների վերապատրաստման գործում (երեկոյան և հերթափոխային ուսումնարաններում)։ Վերջիններիս շրջանավարտների թվաքանակը հանրապետությունում անընդհատ աճում է։ Այսպես, եթե 1972 թ. այն կազմում էր 2,2 հազ. մարդ, ապա 1981 թ.՝ 6,4 հազ.[13]։ Բանվորական կադրերի վերապատրաստման նման ձևը հետագայում ավելի կկատարելագործվի, քանի որ այն հնարավորություն է ընձեռում առավել խորությամբ տիրապետելու ժամանակակից բանվորական մասնագիտություններին։

Զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում պրոֆտեխուսուցման համակարգի զարգացման կարևորագույն հատկանիշներից է ուսուցանվող մասնագիտությունների քանակի աճը։ Եթե 1960-ական թվականների սկզբին հանրապետության նշված համակարգի ուսումնարաններում բանվորական կադրեր էր պատրաստվում 27, ապա 1980-ական թվականների սկզբին՝ 170-ից ավելի մասնագիտությունների գծով (այդ թվում՝ էլեկտրոնային հաշվիչ մեքենաների մոնտաժողներ և կարգավորիչներ, չափիչ սարքավորումների էլեկտրափականագործներ, քիմիական արդյունաբերության ապարատավարներ և այլն)։ Սա վկայում է, որ քննվող ժամանակաշրջանում հանրապետության պրոֆտեխուսուցման համակարգը վերակառուցվում էր ժողովրդական տնտեսության ճյուղային կառուցվածքի փոփոխություններին համապատասխան՝ ելնելով գիտատեխնիկական հեղափոխության պահանջներից։ Սակայն այս բոլորի հետ մեկտեղ պրոֆտեխուսուցման համակարգում պատրաստված բանվորական բարձրորակ կադրերի տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսության ճյուղերում դեռևս

---

12 Հաշվարկը կատարված է՝ «Народное хозяйство Армянской ССР за 60 лет», Юбилейный статистический ежегодник, Ереван, 1980, с. 149, 194; «Народное хозяйство Армянской ССР». Юбилейный статистический сборник к 60-летию образования СССР ժողովածուների տվյալների հիման վրա (էջ 138, 186)

13 «Народное хозяйство Армянской ССР за 1972 г.», Ереван, 1973, с. 121, «Народное хозяйство Армянской ССР», Юбилейный статистический сборник к 60-летию образования СССР, с. 185.

ցածր էր. 1981 թ. ՀՍՍՀ-ում այն կազմում էր 30,3%[14]։ Վերջինս, ինչպես նշվեց ՀԿԿ XXVII համագումարում, պայմանավորված էր նրանով, որ դեռևս դանդաղ են լուծվում ուսումնարանների կառուցման ու ռացիոնալ տեղաբաշխման և որակյալ երիտասարդ բանվորական կադրերի պատրաստման հարցերը՝ հանրային արտադրության և ժողովրդական տնտեսության հեռանկարային զարգացման պահանջներին համապատասխան։ Հանրապետության պրոֆտեխուսուցման համակարգը դեռևս պատրաստում է պահանջվածից ավելի ոչ դեֆիցիտային մասնագետներ՝ ի վնաս առավել անհրաժեշտ մասնագիտությունների։ Մյուս կողմից, արդյունաբերական որոշ ձեռնարկություններ անհրաժեշտ շահագրգռվածություն հանդես չեն բերում նոր ուսումնարաններ կառուցելու գործում։

Մեքենաշինության մեջ բանվորների խիստ պակասի պայմաններում, օրինակ, վերջին 15 տարվա ընթացքում այդ ճյուղի ձեռնարկությունները ստեղծել են 2000 աշակերտական տեղով ընդամենը 4 նոր պրոֆտեխուսումնարան։ Եվ դա այն դեպքում, երբ ճյուղում բանվորների թվի աճը կազմել է 70 հազար։ Այս բոլորի հետևանքով ուսումնասիրվող ժամանակաշրջանում դեռևս մեծ դեր ուներ բանվորական կադրերի պատրաստումն անմիջապես արտադրությունում։ Այդ է պատճառը, որ քննվող ժամանակաշրջանում բանվորների պատրաստման նշված ձևը հանրապետությունում բավական լայն թափ ստացավ։ Այսպես, եթե 1960 թ. ՀՍՍՀ-ի արտադրական ձեռնարկություններում նոր մասնագիտություններ էին ստացել 19,2 հազ. և իրենց որակավորումն էին բարձրացրել 35 հազ. բանվորներ, ապա 1981 թ. այդ թվերը համապատասխանաբար կազմեցին 79,7 հազ. և 272,2 հազ.[16]։ Ինչպես տեսնում ենք, ուսումնասիրվող ժամանակաշրջանում ձեռնարկություններում բանվորների պատրաստումն ու վերապատրաստումը զգալիորեն աճում էին։ Սա օրինաչափ երևույթ էր, քանի որ արդյունաբերության լայն զարգացումը հանգեցնում էր նոր ճյուղերի և ձեռնարկությունների առաջացմանը, որն իր հերթին պահանջում էր համապատասխան բանվորական կադրեր, որոնց պատրաստումը միայն պրոֆտեխուսուցման համակարգը դեռևս ի վիճակի չէր ապահովելու։

Այսպիսով, զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում ՀՍՍՀ-ում արտադրության մեջ բանվորական կադրերի պատրաստումը բավականին տարածված է, և նշված ձևով պատրաստված բանվորների թվաքանակը դեռևս զգալիորեն գերազանցում է պրոֆտեխուսուցման համակարգում պատրաստվածներին։ Սակայն բանվորների պատրաստման տվյալ ձևն արդի գիտատեխնիկական հեղափոխության պայմաններում ունի թերություններ։ Ժամանակակից արտադրական հարաբերությունների զարգացման բարձր մակարդակը բանվորներից պահանջում է տեսական և գործնական բազմակողմանի պատրաստվածություն, որն արտադրական ուսուցումը չի ապահովում։ Նշենք, որ տարբեր ձեռնարկություններում պատրաստված միևնույն մասնագիտությունների բանվորներն ունեն որակավորման տարբեր մակարդակ։ Սա վկայում է, որ արդի ժամանակաշրջանում պրոֆտեխուսուցման համակարգում բանվորական կադրերի պատրաստումն ունի անվիճելի առավելություն։ ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին կից պրոֆեսիոնալ-տեխնիկական կրթության պետական կոմիտեի գիտահետազոտական լաբորատորիայի կատարած հետազոտությունները ցույց են տալիս, որ պրոֆտեխուսուցման համակարգի ուսումնարանների շրջանավարտների հերթական որակավորման կարգ ձեռք բերելու համար 2,2—2,5 անգամ ավելի քիչ

---

[14] Հաշվարկը կատարված է՝ «Народное хозяйство Армянской ССР», Юбилейный статистический сборник к 60-летию образования СССР ժողովածուի տվյալների հիման վրա (էջ 185, 186)։

[15] Կ. Ս. Դեմիրճյան, ՀԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը Հայաստանի կոմունիստական կուսակցության XXVII համագումարին, էջ 76—77։

[16] «Народное хозяйство Армянской ССР в 1965 г.», Ереван, 1966, с. 203, «Народное хозяйство Армянской ССР». Юбилейный статистический сборник к 60-летию образования СССР, с. 186.

ժամանակ է պահանջվում, քան արտադրության մեջ պատրաստված բանվորներին, իսկ առաջինների արտադրական խոտանը 3 անգամ պակաս է երկրորդներից[17]։ Իհարկե, այս ամենը չի նշանակում, որ արտադրական ուսուցումը, որպես բանվորական կադրերի պատրաստման ձև, կորցրել է իր նշանակությունը։ Այն կպահպանվի և առաջիկայում, քանի որ, ինչպես վերը նշվեց, մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով բանվոր դասակարգի շարքերը համալրող նոր աշխատուժի որոշ մասը արտադրություն է մտնում առանց մասնագիտական պատրաստվածություն ունենալու։ Սակայն ապագայում արտադրությունում բանվորական կադրերի պատրաստումը կրելու է օժանդակ բնույթ՝ պայմանավորված պրոֆտեխուսուցման համակարգում պատրաստված բանվորական կադրերի թվաքանակի աճով։ Զեռնարկություններում արտադրական ուսուցման հիմնական նպատակը պետք է հանդիսանա բանվորների վերապատրաստումն ու որակավորման բարձրացումը։

Արտադրության մեջ բանվորական կադրերի պատրաստման բարձր թվաքանակի պատճառներից է նաև կադրերի հոսունությունը։ Նշենք, որ աշխատանքի վայրը հաճախակի փոխած բանվորը մի քանի անգամ է հաշվառվում նոր պատրաստված կադրերի թվաքանակում։ Մեծ հոսունությունը ոչ միայն առաջ է բերում բանվորական կադրերի պատրաստմանը հատկացված միջոցների գերածախս, այլև խոչընդոտում է բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական մակարդակի աճին և բացասականորեն է անդրադառնում աշխատանքի արտադրողականության վրա։ Բանվորական կադրերի հոսունության նվազեցման հարցը միշտ էլ գտնվել է հնարապետության կուսակցական, սովետական և տնտեսական մարմինների ուշադրության կենտրոնում, որոնք դգալի աշխատանք էին տանում այդ ուղղությամբ։ Ինչպես նշվեց ՀԿԿ XXVII համագումարում, «չնայած 10-րդ հնգամյակի տարիներին կադրերի հոսունությունը նվազել է 15 տոկոսով, իսկ մեկ բանվորի հաշվով աշխատաժամանակի կորուստները՝ 14 տոկոսով, այնուամենայնիվ, դրանք դեռևս մեծ են»[18]։ Կադրերի հոսունության կանխմանը մեծապես կնպաստի ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի 1983 թ. օգոստոսին ընդունած «Աշխատանքի սոցիալիստական կարգապահության ամրապնդման ուղղությամբ տարվող աշխատանքի ուժեղացման մասին»[19] որոշման իրագործումը։ Նշված պրոբլեմի ուսումնասիրումը մեր նպատակը չէ, միայն նշենք, որ այն գիտական լուրջ հետազոտության կարիք ունի, որը կնպաստի բանվորական կադրերի պատրաստման և վերապատրաստման պրոցեսի կարգավորմանը։

Այսպիսով, դարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում դգալիորեն կատարելագործվել են բանվորական կադրերի պատրաստման և վերապատրաստման ձևերը։ Հատկապես լայն դարգացում է ստացել պրոֆտեխուսուցման համակարգը, որը գիտատեխնիկական հեղափոխության արդի պայմաններում բարձրորակ բանվորական կադրերի պատրաստման հիմնական և գլխավոր ձևն է։ Դրա հետ մեկտեղ ուսումնասիրվող ժամանակաշրջանում հանրապետությունում դեռևս մեծ դեր էին խաղում բանվորական կադրերի պատրաստումն ու վերապատրաստումն անմիջապես արտադրության մեջ։ Դրանք պայմանավորված են նրանով, որ պրոֆտեխուսուցման համակարգը դեռևս հնարավորություն չունի ժողովրդական տնտեսության ճյուղերը լրիվ ապահովելու բարձրորակ կադրերով։

---

17 «Профессионально-техническое образование», 1965, № 2, с 1.

18 Կ. Ս. Դեմիրճյան, ՀԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը Հայաստանի կոմունիստական կուսակցության XXVII համագումարին, էջ 21։

19 «Սովետական Հայաստան», 7. VIII. 1983։

ПОДГОТОВКА И ПЕРЕПОДГОТОВКА РАБОЧИХ КАДРОВ В АРМЯНСКОЙ ССР В ПЕРИОД РАЗВИТОГО СОЦИАЛИЗМА

РУБЕН АЗИЗБЕКЯН

Резюме

В период развитого социализма одной из характерных черт рабочего класса является высокое профессиональное мастерство и квалификация, которые базируются на достижениях советской системы подготовки и переподготовки кадров. В этом отношении важнейшую роль играет система профессионально-технического образования, которая в исследуемый период значительно усовершенствовалась. Это привело к увеличению численности рабочих кадров, подготовленных в системе профтехобразования. Вместе с тем большое значение продолжает иметь форма подготовки рабочих непосредственно на производстве. Это в основном объясняется тем, что профессионально-техническая учебная сеть еще не может полностью обеспечить потребности народного хозяйства рабочими кадрами.